

## ԿԱՐԾԻՔ

Նախե Արթուրի Ղազարյանի «Ավագ դպրոցում գեղագիտական արժեքների ձևավորումը որպես մաթեմատիկայի ուսուցման հիմնախնդիր» խորագրով ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (մաթեմատիկա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացվող ատենախոսության վերաբերյալ

Նախ անդրադառնանք ատենախոսության խորագրին՝ «Ավագ դպրոցում գեղագիտական արժեքների ձևավորումը որպես մաթեմատիկայի ուսուցման հիմնախնդիր»:

Ինչո՞ւ ավագ դպրոցում: Ինչպես ատենախոսն է նկատում՝ սովորողներին մոտիվացնող հիմնական կամ միակ գործոնը կրթության շարունակականությունն է: Իսկ մաթեմատիկայի և նրա ուսուցման գործընթացի գեղագիտությունը, փաստորեն, չի ծառայում որպես մոտիվացնող գործոն: Այս տեսակետից ուսումնասիրություններն ու գիտավորձի իրականացումը ավելի արժեքավոր են դառնում:

Ուշադրություն դարձնենք «մաթեմատիկայի ուսուցման հիմնախնդիր» արտահայտությանը: Փաստորեն մատնանշվում է, որ առաջնային նշանակություն ունեն ուսուցիչի դիրքորոշումն ու ուսումնական պարապմունքների նպատակաուղղվածությունը:

Եվ վերջապես, «գեղագիտական արժեքների ձևավորումը»: Սա առնչվում է մաթեմատիկական ուսումնական առարկաների հանրակրթական նշանակության հարցին: Այսինքն, մաթեմատիկայի ուսուցման գործընթացը ինչքանով է նպաստում ավելի ընդհանուր, վերառարկայական կարողությունների ձեռքբերմանը: Մի խոսքով, ընտրված է բավականին բարդ ու կարևոր թեմա: Այստեղ իհարկե վճռորոշ դեր ունի դեկավարը՝ դոկտոր, պրոֆեսոր Համլետ Միքայելյանը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային հավաքի 182 էջ, որից հավելվածները կազմում են 19 էջ:

Ներածությունում հիմնավորված է ատենախոսության արդիականությունը, հստակ ձևակերպված են օբյեկտը, առարկան, նպատակը, վարկածը, առաջադրված

խնդիրները, ներկայացված են հետազոտության մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, տեսագործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Այստեղ առանձնացնենք ատենախոսության նպատակը, այն է՝ ավագ դպրոցի մաթեմատիկայի ուսուցման գործընթացի գեղագիտական ներուժի բացահայտումն ու գեղագիտական արժեքների ձևավորման արդյունավետ ուղիների մշակումը:

Մաթեմատիկական գիտելիքների, մեթոդների և ընդհանրապես մաթեմատիկական մտածելակերպի առանձնահատկությունն ու գեղեցկությունը անժխտելի են: Սակայն աշակերտների մոտ դրանց նկատմամբ հետաքրքրասիրության առաջացումը, դրանց կարևորության գիտակցումն ու դրանցով զբաղվելու հաճելիությունը ձևավորելու խնդիրը բարդ է ու կարևոր:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը և ճշգրտորեն ներկայացնում է դրա բովանդակությունը: Ի նկատի ունենալով այս հանգամանքը և այն, որ սեղմագիրը հասանելի է մանկավարժական հանրությանը, չկա անհրաժեշտություն վերարտադրելու ատենախոսության բովանդակությունը՝ բաժին առ բաժին, սակայն հարկ ենք համարում անդրադառնալ մի շարք կարևոր դրվագների:

Տպավորիչ են ուսումնասիրված գրականության ցանկը, դրանց վերլուծությունները և արժեքավոր մատնանշումները: Փաստորեն, ցանկացած հարց քննարկելիս ատենախոսը անդրադարձ է կատարում դրան վերաբերող այլ մասնագետների դիրքորոշումներին:

Ատենախոսը չի բավարարվել իրականացնելու իր գիտափորձն ու ուսումնասիրությունները՝ ընտրելով մաթեմատիկայի որևէ մեկ տիրույթ կամ առարկայական ծրագրի որևէ մեկ բաժին: Նա ընտրել է շատ տարբեր բնույթի ոլորտներ, ինչպիսիք են՝ մաթեմատիկական խնդիրների, ֆինանսական կրթության, հավանականությունների տեսության տարրերի, «Լոգարիթմներ» թեմայի ուսուցման գործընթացները:

Նկատենք, որ գիտափորձի իրականացման գրեթե բոլոր ուղղություններում էլ ատենախոսը հարկադրված է եղել կատարելու սեփական մշակումները՝ և՛ մեթոդական, և՛ ուսումնադիդակտիկ նյութերի առումներով: Այս հանգամանքը ևս մեկ անգամ համոզում է, որ գոյություն ունեցող դասագրքերը չեն նպաստում

նորարարություններ ու նորամուծություններ իրականացնելու նպատակներին, հատկապես՝ երբ հարցը վերաբերում է վերառարկայական կարողությունների ձևավորման խնդիրներին:

Տպավորիչ է նաև գիտափորձի կազմակերպման և արդյունքների վերլուծության իրականացումը:

Սակայն հարկ ենք համարում առանձնացնել որոշ դիտարկումներ.

- Առաջին գլխի առաջին երկու պարագրաֆներից հետո կարելի էր նշել ատենախոսի սեփական դիրքորոշումը:
- Կարծում ենք համեմատաբար շատ ավելի դյուրին է գեղագիտական ներուժի բացահայտումը հավանականությունների տեսության տարրերի ուսուցման գործընթացում և ֆինանսական կրթության իրականացման պայմաններում: Այս տիրույթները իրենց բնույթով արդեն գրավիչ են աշակերտների համար: Փոխարենը՝ կարելի էր ներառել մաթեմատիկայի և երկրաչափության բաժիններից որևէ մեկը, մանավաղ, որ խոսքը վերաբերվում է տարածաչափությանը:
- Գիտափորձի որոշ ուղղություններում օգտագործվում է ԳեոԳեֆրա ծրագիրը, որի օգտագործումը ինքնին գրավիչ է: Հարց է ծագում՝ հետաքրքիր ու գրավիչ է ծրագրի օգտագործումը, թե՞ մաթեմատիկական նյութի բովանդակությունն ու դրա ուսուցման գործընթացը:
- Պարզելու համար, թե ուսուցման գործընթացում S2S ռեսուրսների ներգրավումը արդյո՞ք նպաստում է վերջինիս գեղագիտական գրավչության և սովորողի հետաքրքրության մեծացմանը՝ ատենախոսը գիտափորձի համար ընտրում է երեք ուղղահայացների մասին թեորեմը: Համեմատելու համար հետաքրքիր կլինե՞ր այդ թեորեմի և դրա ուսուցման գործընթացի գրավչությունը բացահայտել նաև առանց ԳեոԳեֆրա ծրագրի կիրառման:
- Կարելի էր անդրադառնալ նաև մաթեմատիկայի ուսուցման գործընթացի գեղագիտական ներուժի բացահայտման նպատակի համատեքստում միևնույն խնդիրը մի քանի մեթոդներով լուծելու հարցին:

Այսուհանդերձ, ատենախոսը կատարել է մաթեմատիկական կրթության բարեփոխմանը նպաստող շատ օգտակար աշխատանք՝ հանդես գալով որպես գիտահետազոտական ունակություններով օժտված մասնագետ:

Ատենախոսությունն ամբողջական, ավարտուն և արդիական հնչեղություն ունեցող հետազոտություն է: Այն գրված է գիտական պատշաճ մակարդակով: Եզրակացությունները տրամաբանորեն բխում են կատարած հետազոտության և ատենախոսության հիմնական դրույթներից: Դրանք արտացոլված են նաև ատենախոսի հրապարակումներում:

### ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Նարե Արթուրի Ղազարյանի «Ավագ դպրոցում գեղագիտական արժեքների ձևավորումը որպես մաթեմատիկայի ուսուցման հիմնախնդիր» խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, ԲԿԳԿ-ի կողմից ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (մաթեմատիկա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս

Ֆիզ.-մաթ. գիտ. թեկնածու, մանկավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Մանուկ Մկրտչյան

Մ.Ա. Մկրտչյանի ստորագրությունը համապատասխանում է  
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտական քարտուղար  
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ



Մ.Մ. Բապիրյան